ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)

Հայաստանի Հանրապետություն

«Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր»

ՎԱՐԿ No. 5114-ԱՄ

SS սարքավորումների տվյալների մշակման կենտրոնների և լոկալ ցանցի հնարավորությունների հզորացման համար սարքավորումների ձեռքբերում

ICB No: TAMP- G-1.4

1. Հայտերի ներկայացման սույն հրավերը ներկայացվում է այս Ծրագրի համար ներկայացված Գնումների ընդհանուր ծանուցումից հետո, որը *Development Business* ինտերնետային կայքում տեղադրվել է 2013թ-ի դեկտեմբերի 20-ին:

2. Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել *Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկից* «**Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի**» ֆինանսավորման համար, եւ նպատակ ունի օգտագործել այս վարկային միջոցների մի մասը «**SS սարքավորումների տվյալների մշակման կենտրոնների և լոկալ ցանցի հնարավորությունների հզորացման համար սարքավորումների ձեռքբերում**» պայմանագրի շրջանակներում վճարումների իրականացման համար: Մասնավորապես՝

Բարձր խտության սերվերներ (6 միավոր), ցածր խտության սերվերներ (27 միավոր), անխափան սնուցման սարք (2 միավոր), APC Symmetra PX բոլորը մեկում կամ համարժեք (2 միավոր), Արխիվացման սարք (2 միավոր), եռաֆազ դիզելային գեներատորներ (2 միավոր), Exadata տվյալների բազայի համակարգ (2 միավոր), կառավարվող ցանցային բաշխիչներ (16 միավոր), երթուղղիչներ (4 միավոր), օպտիկամալուխային ցանցային բաշխիչներ (4 միավոր), պահպանման սարքեր (2 միավոր) 48 ՏԲ հզորությամբ, կառավարվող մեծ ցանցային բաշխիչներ (50 միավոր), կառավարվող փոքր ցանցային բաշխիչներ (58 միավոր), ծրագրային փաթեթներ ցանցային կառավարման համար (1 միավոր), կենտրոնական երթուղղիչներ (4 միավոր), IPSec երթուղղիչներ (54 միավոր), ցանցային լարանցումների սարքավորումներ և նյութեր, ցանցային կառավարման լուծում (1 միավոր):
/High Density Servers (6 units); Low Density Servers (27 units); UPS equipment (2 unit); APC Symmetra PX All-In-One or significantly equivalent (2 units); Tape backup device (2 units); Three Phase Diesel generators (2 units); Exadata Database machine (2 units); Manageable switches (16 units); Routers (4 units); Fiber-optic switches (4 units); Storage devices (2 units) with 48 TB capacity; Large manageable switches (50 units);Small manageable switches (58 units); Network management software packages (1 unit); Central routers (4 units); IPSec routers (54 units); Equipment and materials for network cabling; Network management solution (1 unit)/:

Որակավորման պայմանները ներառում են՝

(ա) Ֆինանսական կարողություններ

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային հավաստում առ այն, որ դա համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջ(ներ)ին:

- Տարեկան շրջանառությունը վերջին երեք (3) տարիներից ցանկացածի երկուսում (2) պետք է երկու (2) անգամ մեծ լինի հայտի արժեքից:
- Հայտատուն պետք է տրամադրի վերջին երեք (3) տարիների իր ֆինանսական հաշվետվությունները:

(բ) Փորձ և տեխնիկական կարողություն

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ նրա առաջարկած Ապրանքները բավարարում են օգտագործման հետևյալ պահանջ(ներ)ին.

- սերվերի և ցանցային սարքավորումների մատակարարման և/կամ արտադրության կամ տեղադրման նվազագույնը 5 տարվա փորձ:
- Նմանատիպ արժեքով և բնույթի նվազագույնը 1 հաջողությամբ կատարված պայմանագիր վերջին 5 տարվա ընթացքում՝ նշելով գնորդին, պայմանագրի գինը և մատակարարված ապրանքներն ու ծառայությունները:
- Հայտատուն պետք է ներկայացնի որակյալ կադրերի առկայությունը հաստատող փաստաթղթերը՝ ապահովելու իրականացումը և տեխնիկական աջակցությունը (CV-ների և վկայականների պատճենները):

(գ) Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ նրա առաջարկած Ապրանքները բավարարում են օգտագործման հետևյալ պահանջին.

- Տրամադրել ուղենշային վերլուծություն/հաշվետվություններ և կատարողականի վերաբերյալ փաստաթղթեր առ այն, որ առաջարկվող ապրանքները համարժեք են կամ գերազանցում են Տեխնիկական մասնագիր բաժնում զետեղված տեխնիկական պահանջը:
- Հավաստիանալ, որ ապրանքները նոր են և որոշակի ժամանակ է շուկաներում են և չեն փոխարինվի նոր/առաջիկա տեխնոլոգիաներով, որոնք կհանեն դրանք կիրառությունից:

Տեղական շուկայում արտադրվող որոշակի ապրանքների (certain goods) նկատմամբ գնային արտոնության գործակից չի կիրառվելու: Հավելյալ մանրամասները ներկայացված են մրցակցային փաստաթղթում:

3. ՀՀ կառավարության աշխատակազմը եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն սույնով հրավիրում է ներկայացնել փակ հայտեր պահանջներին համապատասխանող եւ որակավորված հայտատուներին « **SS սարքավորումների տվյալների մշակման կենտրոնների և լոկալ ցանցի հնարավորությունների հզորացման համար սարքավորումների ձեռքբերման**» համար:

4. Մրցույթը կանցկացվի «ՎԶՄԲ Վարկերի եւ ՄԶԸ վարկերի շրջանակներում գնումների վերաբերյալ» ՀԲ ուղեցույցների շրջանակներում Միջազգային մրցակցային մրցույթի (ICB) ընթացակարգերի համաձայն (Բանկի կողմից հրապարակված 2011թ.հունվարին) եւ հայտ կարող են ներկայացնել Ուղեցույցների շրջանակներում սահմանված թույլատրելի երկրներից բոլոր հայտատուները:

5. Հետաքրքրված թույլատրելի հայտատուները կարող են հետագա տեղեկատվություն ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ից եւ ստուգել Մրցութային փաստաթղթերը 09:00-18:00-ը ստորեւ ներկայացվող հասցեով:

6. Հետաքրքրված հայտատուները անգլերեն լեզվով ամբողջ մրցութային փաստաթղթերի փաթեթը կարող են ստանալ ներքոհիշյալ հասցեով գրավոր դիմում ներկայացնելուց եւ հիսուն (50) ԱՄՆ դոլարի կամ որեւէ այլ ազատ փոխարկելի արժույթով համարժեք գումարի անհատույց վճարում կատարելուց հետո: Վճարման ձեւն է՝ վերոնշյալ գումարի փոխանցումը ԱՖԾԿԿ-ի ստորեւ նշված հաշվի վրա: Փաստաթղթերի տպված տարբերակը կհանձնվի Հայտատուի ներկայացուցչին: Ի հավելումն տպագիր տարբերակին, փաստաթուղթը նաեւ անհրաժեշտության դեպքում կուղարկվի էլեկտրոնային տարբեակով: Տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների միջեւ անհամապատասխանության դեպքում կգերակայի տպագիր տարբերակը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորեւ նշված հասցեով, մինչեւ փետրվարի 26, 2014՝ ժ. 15:00 (տեղական ժամանակ): Հայտերը չի թույլատրվում ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հայտատուի ներկայացուցիչների ներկայությամբ մինչեւ փետրվարի 26, 2014՝ ժ. 15:00 (տեղական ժամանակ): Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն 110000 ԱՄՆ դոլար գումարի չափով կամ դրան համարժեք ազատ փոխարկելի այլ արժույթով մրցութային երաշխիքով:

Վերոշարադրյալ հղում կատարված հասցեն հետեւյալն է՝

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
ԱՖԾԿԿ
ՀՀ ֆինանսների նախարարություն
սենյակ N 344, կառավարության տուն 1, Հանրապետության հրապարակ
Երեւան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 545 708

Հաշվեհամարի տվյալներն են.
Էյջ Էս Բի Սի Բանկ Հայաստան
001-155142-045
Swift Code: MIDLAM22